ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մայիսի 2019 թվականի N 66 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածի 3-րդ մասը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի N 364- Ա հրամանը՝

որոշում եմ.

1. Հաստատել 2019 թվականի 2-րդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կողբ համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողություն իրականացվելիք հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը համաձայն հավելվածի:
2. Հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի հունվարի 16-ի N 01/17.1/107-17 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող հսկողության հարցաշարով:
3. Անհրաժեշտության դեպքում հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):
5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ համայնքում հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:
6. Մարզպետարանի գլխավոր քարտուղարին՝ երկրորդ եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:

Հ. ՉՈԲԱՆՅԱՆ

21.05.2019

X

21 մայիսի 2019թ.
ք. Իջևան

Հավելված

ՀՀ Տավուշի մարզպետի

21 մայիսի 2019 թ. 66 -Ա որոշման

2019 թվականին Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կողբ համայնքում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

հ/հ	Համայնքի անվանում	Իրականացվելիք հսկողության ժամանակա հատվածը	Իրականացվելիք հսկողության բնագավառ	Հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Անուն, ազգանուն
1.	Կողբ	2-րդ եռամսյակ	բնապահպանություն, առևտուր, արտակարգ իրավիճակներ ,ՏԻՄ պարտադիր լիազորություններ, ֆինանսներ, աղբահանություն, հողաշինություն և հողօգտագործում	Խմբի ղեկավար, Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ափինյան Սամվել Գևորգյան Գուրգեն Հարությունյան Սամվել Սուքոյան Աղաբեկ Գալստյան Ժորա Խաչատրյան Արմեն Ճաղարյան Համլետ Փիրումյան

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ